ախջկան մը հետ։ Մէկէլ ախպէրները իրարու խրիւէն հասան[1], Զէնով Յովան պոսկվաւ խետ Կիւլիզար խաթունին, Թառլան Վ.էդօն էլ խետ ճիւտ Կիւլակին։

20. Ժամանակ անցիր էր Մորայ Թագաւորուն տղայ ծնած չէր. օրօրկեց Սատնայ քաղաքը կտրիճ Մէհէրն կանչեց ուր մաճլիս. ասաց.—Մէհէր, գիտէ՞ս քե ինչ ապով[2] եմ կանչե։—Չէ ասաց, թագաւոր ապրած կէնայ, չեմ գիտե։—Թագաւորն ասաց իմ եաշն[3] ընցեր ի, չում էսօր Աստուած ձիկ զաւակ չտվե, ես ճհէլ կնիկ մը ունիմ, տիւ էս գիշեր պիտի էրթաս իմ կէօղվէնք[4], որ ձիկ տղէ մը էլնի. իմ թագաւորութեն պահի իմ տիւշմանքտիկաց դէմ կայնի։—Էտայ չէլած բան ի, ասաց Մէհէր, տիւ անօրայ տաճիկ ես, ես քրիստոնեայ. ինչպէս կանամ մանե քըոյ կէօղվէնք։

21.—Թագաւորն ասաց. Մէհէր, ես քե սիրեր եմ, խաթրով էլե պիտի էրթաս, զօռով էլե պիտի էրթաս։ Մէհէրի չարէն կտրաւ. գնաց ինոր կնկեան մօտ. առաւտուն երբ որ էլաւ, իզին ուղեց թագաւորուց, գնաց ուր քեաղաք. ինն ամիս, ինն օր, ինն սհաթ որ թմբմաւ. թագաւորու կնկեան տղէ մը էլաւ, անուն իտիր Մէլիք։

Գ.

22. Մհէրին էլ չում էն օր պտուղ չկէր, վեց տարիէն սորայ Մհէրին էլ տղէ մը էլաւ՝ անուն իտի Տաւլիթ։ Տաւլիթի քառասունք տէլ չէր լցվե, Մհէրն մեռաւ։ Սինամ՝ Տաւթի մէր, կօնտախ[5] իթօղ մէջ տախտին ասաց. «Իտա՛ Մհէրին, արեւալոս ձիկ խարամ էլնի», եօթոտով ներս[6] մտաւ սուղ պահեց։

23. Էլան Տաւլիթ, որ շատակեր էր ուրենք էլ ծիծ չունէին, ինոր խամար տվին էրկու մշակի քեամակ, որ տանեն Մորայ Մէլիքի մօր շախելու։—Մելիքի մէր ասաց. խաղար բարով էք իկե էտ էլ իմ զաւակն ի կշախեմ։ Երբ ծիծն իտիր բէրան տաճկի ծիծ էլնելու խամար Տաւլիթ չծծեց. մէրն էլաւ տաւրի կաթ լցուց մէջ կուտշին, Տաւլիթին կերցուց. չում Տաւլիթն էլաւ իրեք տարեկան, կաթից կտրեց։

24. Էն ժամ Մէլիքն էլէր էր կտրիճ ճհէլ։ Քառասուն կիտր առճիճ արեր ես ուր հէօլ, օր իրեք դիր կրզարնէր կտանէր տարի գլօխ, ձիաւորներ կէրթին կրկրին։ Տաւլիթ խարցուց ուր մօր «Իմ ախպէր Մէլիք տրոր կէրթայ հմեն օր»։—Ասաց կէրթայ հէօլ խաղալ։—Տաւլիթն ասաց. ես էլ պիտի էրթամ սէհր անեմ։

---

1 Մեծացան. չափահաս դարձան։ 2 Պատճառաւ։ 3 Հասակ.
4 Անկողին։ 5 Խոնարհ, բալուլ։ 6 Եօթը դռնով ներս (?!)։